Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022թ. մայիսի 25-27-ը Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն՝ քաղաք Սկոպիե կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Հյուսիսային Մակոդոնիայի Հանրապետություն, ք. Սկոպիե, 2022թ. մայիսի 25-27-ը

4. Հրավիրող կողմը՝
Միացյալ ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ և Հյուսիսային Մակեդոնիայի Կ. Մեթոդիուսի համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետ

5. Գործուղման նպատակը՝
Մասնակցություն Միացյալ ազգերի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի կողմից կազմակերպվող «LANDNET» 13-րդ միջազգային աշխատաժողովին

6. Քննարկված թեմաները՝

- Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում հողային բանկի գործիքների և դրանց կիրառման լավագույն փորձի ներկայացում
- Հյուսիսային Մակեդոնիայում հողերի կոնսոլիդացիայի գործընթացի ներկայացում
- Քաղաքականության մշակման գործիքների ներկայացում՝ ուղղված գյուղատնտեական շրջանառությունից դուրս մնացած չմշակվող հողերի կոնսոլիդացմանը
- Այցելություն քաղաք Բիտոլա, «Էգրի» կոնսոլիդացված հողերի տարածքներ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- 2022 թվականի մայիսի 25-27-ը Հյուսիսային Մակեդոնիայի Սկոպիե քաղաքում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության նախաձեռնությամբ իրականացվող «LANDNET» 13-րդ միջազգային աշխատաժողովի առաջին օրը նվիրված էր հողերի կոնսոլիդացիայի բնագավառում Հյուսիսային Մակեդոնիայի փորձի և քաղած դասերի ներկայացմանը : Ներկայացվել են հողային բանկի ստեղծման գործիքակազմը, ամփոփվել հողերի կոնսոլիդացիայի արդյունքում արձանագրված ձեռքբերումները, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում կայուն գյուղատնտեսության զարգացման համար:
- Աշխատաժողովի հաջորդ փուլը նվիրված էր մասնակից երկրների ներկայացուցիչների կողմից իրենց երկրում հողային բարեփոխումներին ուղղված ընթացիկ իրավիճակի ներկայացմանը, առկա խոչընդոտների ներկայացմանը և զարգացման հնարավոր ուղիների նախանշմանը: Շնորհանդեսներով հանդես են եկել Դանիայի, Սլովենիայի, Լիտվայի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչներ:
  ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը նույնպես հանդես է եկել շնորհանդեսով ներկայացրել Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությունը և ընդհանուր մոտեցումները՝ ուղղված հողերի կոնսոլիդացիային, հողային բանկի ստեղծման և հողային ռեֆորմի իրականացման հնարավորություններին:
- Հանդիպում Հյուսիսային Մակեդոնիայի գյուղատնտեսության նախարարի տեղակալ պարոն Աբեդինի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են հողային բարեփոխումներին առնչվող առկա մարտահրավերները և դրանց հաղթահարմանն ուղղված անցնցում ճանապարհային քարտեզը:
- Ճանաչողական այց Հյուսիսային Մակեդոնիայի Բիտոլա քաղաք: Այցի նպատակն էր աշխատաժողովի մասնակիցներին ավելի առարկայական ցուցադրել հողերի կոնսոլիդացիայի արդյունքում ձևավորված խոշոր հողակտորները՝ բարելավված ճանապարհներով, ոռոգման համակարգերով և այլ ենթակառուցվածքներով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

5/31/2022

X

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

31.05.2022թ.